

ՈՒՍՈՒՑՉԻ ՈՒՂԵՑՈՅՑ

**«ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԶԱՅՆԱՊԵՆԱԿՆԵՐ
ՀԱՅ ՄԱՆԿԱՄՍՈՒՐՆԵՐՈՒ
ԵՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ»**

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ՝
Յ. ԻՆՃԷՃԻԿԵԱՆ

ՅՈՒԼԻՍ, 1986

Սոյն գրքոյկի հրատարակութեան ծախսը հոգացած են
ՏԷՐ և ՏԻԿԻՆ ՎԱՐԴ ԶԱՔԱՐԵԱՆՆԵՐ

ՆԱԽԱԲԱՆ

«Ուսուցչի Ուղեցոյց»ի պատրաստութիւնը Գանատայի Բազմամշակութային կողմէ նկատուած անհրաժեշտութիւն մըն էր՝ «Դաստիարակչական Ձայնապնակներ Հայ Մանկամտւորներու եւ Մանկապարտէզներուն համար» ծրագրի իրագործման:

Հետեւաբար, այս պատրաստութեան մէջ կը ներփակենք, առաջին մասով, սկզբունքներու տասնաբանեայ մը, **ՊՈՒՐՊԱՏԻԿ**ի մասին տեղեկութիւններ, որոնք պիտի օգնեն ուսուցչին ծանօթանալու ծրագրի բնոյթին: Երկրորդ մասին մէջ տրուած են ընդհանուր կէտեր երգի ընտրութեան, ուսուցման, ձայնաձուլի, կշռոյթի եւ երաժշտական այլ յղացքներու (concept) մասին: Իսկ առանձին երգերու հետ տրուած են զանոնք զարգացնելու աշխատանքներ եւ խաղեր:

Աշխատանքները եւ խաղերը թէեւ դրուած են երգերու հետ, սակայն անոնց տեղադրումը առաձգական է. ուսուցիչը ըստ իր հայեցողութեան, դասարանի կարողութեան եւ օրուան միւթի յարմարութեան կրնայ աշխատանքները եւ խաղերը փոխել, կրկնել կամ զանց առնել:

Ձայնապնակը, աշխատանքները եւ խաղերը նախատեսուած են ծաղկոցի բողբոջ դասարանի համար: Կրնան նաեւ գործածուիլ ծիլ եւ կոկոն դասարանի փոփրերուն համար, ըստ ուսուցչի հայեցողութեան:

Ա. ՄԱՍ

ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ

1. Մանուկին մօտ ձայներու զգացողութիւնը բնածին է. ձայնն ու նշանակութիւնը կը նոյնանան, այսպիսով իր հասկնալու եւ հասկցուիլու պահանջը կը բաւարարուի:
2. Իմաստի այս նոյնութեան մաս կը կազմէ շեշտադրութիւնը. այսպէս իր կեանքին իմաստ կը տրուի եւ կարգ-կանոն կը գրուի:
3. Բոլոր երեխաներն ալ երաժշտական կարողութիւն ունին. անհրաժեշտ է զայն զարգացնել կազմակերպուած եւ նպատակադրուած ձեւով:
4. Անխօս մանուկը նախ կ'երգէ ապա կը խօսի. այն բոլոր երգեցիկ ձայները որոնք կը լսենք իրմէ այս շրջանին՝ բառակազմութեան փորձեր են. ուրեմն երաժշտութիւնը լեզուի զարգացման կարեւոր ազդակ է:
5. Երեխային լեզուի առանձնատկութիւնները կու գան այն մշակոյթէն ուրկէ ինք կը սերի. հարկ է նախ տալ իր հարազատ մշակոյթը ապա ուրիշներ, բնագիր եւ ոչ թարգմանուած:
6. Կեանքի առաջին 6 տարիները ապագայ մարդու կազմաւորման ամենակենսական տարիներն են. մեր ուշադրութեան առարկան պէտք է ըլլայ մանուկը, անոր Ֆիզիքական, մտային եւ հոգեկան զարգացման ընթացքը եւ ոչ թէ լեզուն, երաժշտութիւնը, գծագրութիւնը եւ այլն, որոնք միջոցներ են միայն:
7. Երեխային մտածելակերպը հիմնուած է շարժման վրայ, զգայական/Ֆիզիքականը կը նախորդէ վերացականին. ընդհանուրը՝ մասնաւորին. բոլոր յղացքներու ուսուցման մէջ շարժումն ու զգայութիւնը առաջին կարգի պէտք է դրուին:
8. Թէեւ եսակեդրուն՝ երեխան պահանջը ունի իր մաս կազմած բնկերութեան մէջ ինքզինք լաւ զգալու. երաժշտութեան ուսուցումը պէտք է միտի ասոր կողքին մանուկին մօտ զարգացնել ներքին հակակշիռի եւ շարժման ներգաշնակումի կարողութիւնը:
9. Լսողութեան զգայարանի կանոնաւոր զարգացումը (շարժում միացած կշռոյթի, խաղիկի (rhyme) եւ խաղի) մեծապէս պիտի դիւրացնէ սորվելու ընթացքը, ընդլայնէ անոր իմացական, զգայական եւ Ֆիզիքական կարողութիւնները եւ հարստացնէ իր լեզուական պաշարը:
10. Երաժշտութիւնը առաջինն է արուեստի մարզերէն զոր երեխան ամբողջութեամբ կ'ըմբռնէ. հետեւաբար, լեզուի եւ մանաւանդ մշակոյթի փոխանցումը լաւագոյնս կ'իրագործուի երաժշտութեան ճամբով:

ՊՈՒՐՊԱՏԻԿԸ ՈՒՐԿԷ ԵԿԱԻ

Տարիներու փնտառութիւն եւ այլազան փորձերէս ետք (ընդհանրական եւ կեդրոնական դէմք մը գտնելու, հայ մանուկներու երաժշտական ուսուցման ծրագրին առնթներ) վերջապէս եկաւ **ՊՈՒՐՊԱՏԻԿԸ**:

Առաջին անգամ անոր հանդիպեցայ 1979-ին, երբ «Հորիզոն»ին համար Վարդապետի առթիւ գրութիւն մը համադրել խնդրուեցաւ ինձմէ: Հոն էր, Բանբեր Երեւանի Համալսարանի 1977 թիւ 2 համարին մէջ՝ Վ. Բոյսեանի ստորագրութեամբ այս խիստ հետքորդական յօդուած-ուսումնասիրութիւնը: Մէկէ աւելի անգամներ կարդացի զայն, միաժամանակ փնտոելով ապրող փաստերը դարասկզբին Գանատա հաստատուած հայերու մօտ: Ի զուր:

Այդ փաստը, զարմանալիորէն, միշտ մօտս էր: Եւ գրսեւորուեցաւ միայն այն ատեն, 1984-ին, երբ ամուսնիս համադրիչացիներէն մէկը կը ձայնագրէի: Իրենց մանկութեան խաղերուն հետ նաեւ ինծի տունին **ՆՈՒՐՈՒՆԻՆ*** նուիրուած խաղիկ մը:

Նուրին, Նուրին եկեր է,
Դրան առջեւ կայներ է,
Շալէ շապիկ հագեր է,
Ոսկէ գօտիկ կապեր է,
Երկնէն ցօղ է ուզում,
Երկրէն պտուղ է ուզում,
Եզ բերէք պօրտին բսնէք,
Ձու տուէք քաթին դնննէք:

Կր զգայի որ անհրաժեշտ էր այս բոլորը վերակենդանացնել եւ վերադարձնել մեր ժողովուրդին:

1985-ի Մարտին Գանատայի Բազմամշակութայինին ներկայացուցի ծրագիր մը՝ «Դաստիարակչական Զայնապնակներ Հայկական Մանկամտերներու եւ Մանկապարտէզներու համար» խորագրով, որը ընդունուեցաւ նոյն տարուան Օգոստոսին:

Մինչ այդ, արդէն կը ձեւաւորուէր այս ծրագրի ստանալիք ուղղութիւնը: Պիտի կարենայի հետեւեալ նպատակները միեւնոյն աշխատանքին մէջ իրագործել:

1. Հայերէն լեզուի ուսուցման որպէս օժանդակ՝ բնորոշ/հեղինակել երգեր/խաղիկներ որոնք հայերէն լեզուի շնչատարական առանձնաշատկութիւնները կը գրսեւորին:
2. Հայ մշակոյթի փոխանցման որպէս լաւագոյն միջոց՝ մանկական, աւանդական եւ հայ երաժշտութեան ոճով երգեր հրամցնել:
3. Երգերը բնօրել համաձայն երեխաներու սահմանափակ ձայնածաւալին եւ աստիճանարար դարգացնել:
4. Երգերու խաղիկներու ընդմէջէն երեխան կապել եւ բնտելացնել իր շրջապատին հետ, որպէս յաւելեալ խթան անոր ստանալիք Ֆիզիքական եւ հոգեմտաւոր զարգացման:

Այս բոլորը լաւապէս ընդելուզելու յարմարագոյն թեկնածուն **ՊՈՒՐՊԱՏԻԿԸ** էր:

«Բարիլոյս Պուրպատիկ» եւ «Պուրպատիկը Ծաղկոց Կուգայ» երգերով **ՊՈՒՐՊԱՏԻԿԻ** արտաքին եւ ներքին նկարագրական գիծերը կը գրսեւորուին: Այսպէսով, կը յուսանք **ՊՈՒՐՊԱՏԻԿԸ** հայ մանուկին ամէնօրեայ ընկերը դարձնել:

(*) Նուրինը Պուրպատիկի մէկ այլ անունն է, տես էջ 4

Ո՞Վ Է ՊՈՒՐՊԱՏԻԿԸ ԵՒ Ի՞ՆՉ ԿԸ ԽՈՐՀՐԳԱՆՇԷ

Պուրպատիկ, Նուրին/Նազարէ, Պուպլատիկին, Մամաշթիկ, Չամչախաթուն, Ջիշի մամա, Ուշխուրուճի, Ուրրաթեկին, Խունձկուլուլու, Խունճկուլուլու, Խուչկուրուրիկ, եւ այլն՝ այս բոլորը Վանատուր եւ Ամանոր Հայոց այգեգործութեան, պտղարուծութեան, հացարոյսերու եւ բերքի տօներու հովանաւոր աստուածութիւններուն մարմնաւորումներն են՝ երկաթէ կամ փայտէ կերպարանքներով:

Վանատուր-Ամանորի մեհեանք կը գտնուէր Բագրեւանդ Գաւառի Բագաւան-Իրցաւանի մէջ: Անոնց տօնը կը կատարուէր գարնան (Մարտ) կամ ամրան (Օգոստոս)՝ Նաւասարդի առաջինէն վեցերորդ օրը: Նաւասարդի տօնը Հայաստանի շատ մը շրջաններուն մէջ վերապրած է մինչեւ վերջերս՝ Խլվլիկի տօն՝ վերանուանումով: Վանատուրը կազմուած է Հյ. վանք + տուր բառերէն, կը նշանակէ «հիւրընկալ», իսկ Ամանորը Հյ. ամ, տարի + նոր բառերէն, կը նշանակէ «նոր տարի»: Ամանորը ջրային տարեբքի խեթական Նար աստուածութիւն նոր անունն է՝ բերքերը հովանաւորելու երկրորդ դերով:

Այսպէս, բերքերու հովանաւոր ամուսին աստուածները կամ երկանուն աստուածութիւնը (Վանատուր/Ամանոր) քրիստոնէութեան շրջանին վերապրեցաւ ժողովուրդին մօտ երկաթէ կամ փայտէ արձանիկներով եւ համապատասխան հաւատալիքներով ու ծէսերով:

Այս արձանիկները, որոնց բազմազան անունները թուեցինք վերը, կ'ըլլային թէ՛ իգական եւ թէ՛ արական սեռի: Երբեմն այս դերակատարութիւնը կը կատարէին ծպտուած տղաք կամ կիներ:

Հակառակ գոյութիւն ունեցող տարրերութիւններուն (աշխարհագրական դիրքի որպէս արդիւնք), այս բոլոր արձանիկներն ալ ունին ընդհանրութիւններ: Իգական սեռի արտաքինին մէջ մեծ տեղ կը գրաւէ՝ շիլա շապիկն ու կարմիր գօտիկը, ցախաւելը, շուլ ու փալաւը, գլխու մաղը, առական սեռի մօտ՝ փափախը, փայտէ կմախքը, շալէ շապիկն ու կեմէ գօտիկը: Կան նաեւ՝ «երկսեռ» արձանիկներ, ինչպէս Նուրին/Նազարէն, որու հագածը տղու շալէ շապիկ է, իսկ մէջքինը՝ աղջկայ կարմիր գօտիկ:

Արձանիկը կը պտտցնէին գիւղին մէջ, վրան ջուր կը սրսկէին, կարգ մը վայրերու մէջ կ'ընկերակցէին թմբուկով ու երգ-աղօթքներով երկնքէն կը խնդրէին անձրեւ իսկ երկրէն՝ բերք: Այլ տեղեր կը նուիրէին ցորենով հիւսուած բազմաձեւ փունջեր:

Համադրուած՝ «Վանատուր եւ Ամանոր աստուածութիւններու ծպտեալ պաշտամունքի հարցի շուրջ», յօդուածէն
Վ. Բղոյեան, Բ.Ե. Հ., 1977, 2 (146-161)

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Ա. ԵՐԳԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

1. Նախապատուութիւն տալ ժողովրդական կամ աւանդական երգերու, որոնք ժամանակի փորձաքարին դիմացած են.
2. Ընտրել կարճ երգեր, կրկներգերով լեցուն.
3. Ընտրել երգեր ուր երաժշտական շեշտը կը համընկնի լեզուական շեշտին.
4. Հեռու կենայ թարգմանութիւններէ. երգը երգել հարազատ լեզուով.
5. Երգերու թիւր ըլլալ քիչ. երգերը կրկնել յաճախ՝ տարրեր յղացքներ սորվեցնելու համար.

Բ. ԵՐԳԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

1. Անուղղակի, ուրիշ աշխատանքի մը կամ հանգիստի պահուն.
2. Երաժշտութեան դասին նոր երգը մի քանի անգամ երգել երգի բնորոշ շարժումներով.
 - քաջալերել որ երեխաները ծափով ընկերանան երգին.
 - հրաւիրել երեխաները որ օգնեն քեզի կրկներգին մէջ.
 - քաջալերել որ շարժումներէն կոահեն երգին իմաստը.
 - երեխաներուն շարժումներէն օրինակներ վերցնելով առաջնորդել միւսները նոյնը բնելու.
3. Եթէ երգը պատմութիւն ունի՝ ձեռքերով, մնջախաղով (mimic) կամ խամաճիկներով ներկայացնել, ապա գերակատարութիւնը վստահիլ երեխաներուն.
4. Աւելի ուշ՝ երբ երգը լաւ սորված են, ձայնագրել զիրենք եւ ունկնդրել տալ. այս վերջինը լաւ միջոց է սխալներ շտկելու եւ ինքնապատահութիւն զօրացնելու.

Գ. ԶԱՅՆԱԾԱԻԱԼ

Երեխային ձայնածառայլը սահմանափակ է. երեք տարեկանին սօլ-միւ կըրնայ շատ հանգիստ երգել. տօնն լաւ կամ րէէն սի հազիւ 6 տարեկանին կը տիրապետէ: Կ'արժէ 3 տարեկան երեխային խօսիլ մեր երկու ձայներուն մասին (խօսակցական եւ երգային) հետաքրքրական ձեւով:

Ուշադրութիւն:

1. «Պուրպատիկը Ծաղկոց Կու գայ» երգին հարցումի մասը ուսուցչուհին կ'երգէ եւ փոքրերը կը պատասխանեն: Այդ մասերը բարձր են ու երեխաները 5-6 տարեկանին միայն կըրնան երգել:
2. «Կաղանդ Պապա» երգի բնագիրը ըէ միւնր է. ձայնագրութեան ժամանակ բարձրացաւ ֆա միւնրի: Երգի մեղեդային դարձուածքները զժուար են. կը յանձնարարեն այս երգը օգտագործել կշռոյթի ($\frac{6}{8}$), երաժշտութեան բմ-րոշխման (music appreciation) եւ Կաղանդի երգ-պարի համար:

Դ. ԿՇՌՈՅԹ (RHYTHM) ԵՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Բոլոր երեխաներն ալ կը շարժին երբ շարունակ կրկնուող կշռութային դարձուածքներ կը լսեն: Այդ շարժումը պէտք է համադրուի չափի կանոնաւոր, շեշտուած եւ անշեշտ զարկերուն հետ: Մարմնի մասերու շարժումներով, ձայներով, գործիքներով եւ բառախաղերով՝ երեխային պէտք է օգնել որ ներքնապէս, առանց պարտադրանքի, հասնի չափի զգացողութեան:

Դասարանին մէջ ունենալ «գործիքի անկիւն» մը, ուր պահել բոլոր հարուածային Orff-ի գործիքները: Երեխաներուն տրամադրութեան տակ դնել այնքան տեսակ գործիք որոնց հետ պէտք է աշխատիլ այդ շրջանին: Սկսիլ 2 գործիքով եւ աւելցնել: Ազատ ժամերուն առիթ տալ երեխաներուն որ հոն ալ գտնուին եւ առանձինն յայտնագործութիւն կատարեն:

Ուշադրութիւն

Երեք տարեկան երեխաները կրնան պարզ (մէկական) շարժումներ կապել, բայց ոչ մէկէ աւելի միաժամանակ շարժումներ:

ԲԱՐԻԼՈՅՍ ՊՈՒՐՊԱՏԻԿ

Խօսք եւ երժշտ. ՅԱՄՄԻԿ ԻՆՃԷՃԻԿԵԱՆ

Նպատակ: «Բարի լոյս» եւ անունը ըսել վարժեցնել. ծանօթացում Պուրպատիկի հետ.

Բառեր եւ խօսակցութեան նիւթ:

սար ու դաշտ ↔ վեր ու վար ↔ բարձր ու ցած.
 արեւ ու անձրեւ ↔ չոր ու թաց ↔ ուրախ ու տխուր.
 անմեղ ու ճարպիկ հով ու ամպ.

Գործիքի անկիւն: փայտիկ կամ շիկոց, եռանկիւն:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՒ ԽԱՂԵՐ

1. Կշռոյթ եւ բառ

ա. ծափել երեխաներուն անուններուն, առարկաներուն, խաղալիքներուն եւ այլ բաներուն կշռոյթը.

Ա - նի | Պուր - պա - տիկ | Ար - սի - նէ | սե - դան | պա - տու - հան |

ապա նոյնը նուագել փայտիկով.

բ. Հարցում - պատասխան (արագ)

հ. Ի՞նչ է, Ի՞նչ է ա - նու - նի | պ. Ա - նի է ա - նու - նս |

գ. ներկայ - բացակայ (դանդաղ)


հ. Ա - նի | Թո - սուն - հան | պ. ներ - կայ - կայ |

հ. քա - ռի - լոյս, ըն - կեր - ներ, Ի՞նչ - պէս էք. |

պ. լաւ ենք, օ - թորդ, դուն Ի՞նչ - պէս ես. |

2. Կշռույթ եւ շեշտ «Գնդակի խաղ»

Շրջանակի նստիչ ծալապատիկ. ունենալ գնդակ մը կամ աւազով լեցուած տուպրակ մը. գնդակը անցնել մէկ ձեռքէն միւսը ամէն անգամ որ «տուր» կ'ըսուի հետեւեալ նախադասութեան մէջ.



տուր գըն – դա – կը, տուր ին – ծի, եթէ կ'ուզենք խաղը վերջացնել կ'ըսենք. տուր որ խաղը վերջացնենք.

Երբ երեխաները խաղին վարժուին եւ ճիշդ շեշտին գնդակը անցնեն, խաղը կրկնել «արի լոյս» երգով:

3. Լսողութեան սրում մեղմ/գորաւոր

Ուտքի շրջանակ կազմել. ուսուցչուհին կեղրոնը ետանկիւնը կը նուագէ. գորաւոր նուագին երեխաները կը սեղմեն շրջանակը, իսկ մեղմին՝ կը լայնցնեն.

4. Ծարժում եւ արտայայտութիւն դանդաղ/արագ

Երեխաներուն տալ կապոյտ գոյնի շղարչ գանդաղի համար եւ կարմիր՝ արագի համար.

գանգակով նուագել $\text{րա} - \text{րի} - \text{լոյս, եւայն}$ գանդաղ – կապոյտ շղարչը ճօճել

շիկոցով նուագել արագ – կարմիր
 $\text{ի}^\circ\text{նչ է, ի}^\circ\text{նչ է ա} - \text{նու} - \text{նդ, եւայն}$ շղարչը ճօճել

եւ $\text{րա} - \text{րի} - \text{լոյս, րո} - \text{լո} - \text{րիդ րա} - \text{րի} - \text{լոյս, եւայն}$
 ապա ամբողջ երգը երգել եւ շղարչները ճօճել հետեւելով երգի tempo-ի փոփոխման.

5. Չայնի ճանաչում եւ զանազանում բարձր/ցած

Երեխաներուն մէկ խումբը լեռ կ'ըլլայ ուտքի կենալով, իսկ միւս խումբը՝ ձոր, նստած. Պուրպատիկը կամ խամածիկը կ'անցնի ձորէն լեռ եւ լեռնէն՝ ձոր:

$\text{չ} = \text{չեմֆերց քանալ}$

ՄԱՐԶԱՆՔ

Խօսք եւ երժշտ. ՅԱՍՄԻԿ ԻՆՃԵՃԻԿԵԱՆ

Նպատակ: Մեծ մկանային շարժման նկունութիւն եւ ներդաշնակութիւն.

Բառեր եւ Խօսակցութեան ճիւղ:

համարձակ / ամչկոտ, շրջանակ / ուղիղ գիծ,
մարմնի անդամներու հանած ձայները.

Գործիքի անկիւն: փայտիկ կամ բմբուկ, բոժոժ կամ ծնծղաշ.

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՒ ԽԱՂԵՐ

1. Կշռոյթի աշխատանք (echo clapping)

ա.	♪ ♪ ♪ ♪	բ.	♪ ♪ ♪ ♪	գ.	ա-բ եւ բ-բ միացնել
դ.	♪ ♪ ♪ ♪	ե.	♪ ♪ ♪ ♪	զ.	դ-ե եւ ե-բ միացնել.

այս բոլորը նախ ընել ծափելով, ապա օրուան գործիքներով.

2. Ծարժում եւ բառ

Երեխաները հետեւեալ նախադասութիւնները կ'ըլլան.

բոտի պէս երկնանք, օգանաւի պէս թռչինք, (կամ թռչունի պէս)
ձաղիկի պէս բացուինք, նապաստակի պէս ուտոտանք,
ճիւղի պէս ճօճուինք, արեւի պէս արթնանք,
սահնակի պէս իյնանք, ալիքի պէս շարժինք,
գորտի պէս ցատկենք, ջուրի պէս հոսինք,
հոփի պէս դառնանք, արձանի պէս կենանք.
փուշիկի պէս ուտինք.

3. Կշռոյթ եւ բառ

Տես՝ երգ 1, թիւ 1.

4. Ծարժում եւ արտայայտութիւն «հայելի ըլլալ»

Ուսուցչուհին երգին ընտրոշ շարժումներ կ'ընէ. երեխաները կը հետեւին իրեն. աւելի ուշ երկու երեխայ զէմ գիմաց կը կենան, մէկը կ'ընէ շարժումները եւ միւսը կ'ըլլայ անոր «հայելի»՝ այս միջոցին ուսուցչուհին եւ դասարանը երգը կ'երգեն.

5. Լսողութեան սրում

Երգի հղանակին առնթեր դաստակը փեր-փար շարժել. սկսի կուրծքին զուգահեռ եւ եղանակի բարձրանալուն դաստակը բարձրացնել եւ իջնելուն՝

so so so հալլն.
fa fa fa
mi mi

այս ձեւը մեծապէս կը դիւրացնէ հղանակի ճշգրիտ երգեցողութիւնը:

ՀԷՅ ԱՇՈՒՆ

Խօսք եւ երժշտ. ՍՈՒՍԱՆՆԱ ԳԱԼԻԿԵԱՆ

Նպատակ: Հաւաքական աշխատանք.

Բառեր եւ խօսակցութեան ցիրք:

զամբիւղ, յի/յիանայ, տարուան եղանակ եւ պտուղներ, աշնան վերաբերեալ այլ երեւոյթներ. — թոշուններու գաղթը, տերեւներու գունափոխումը, ծառերու մերկացումը, եւ այլն.

Գործիքի անկիւն: շխկոց, դափ, բոժոժ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՒ ԽԱՂԵՐ

1. Ծարժում եւ արտայայտութիւն

Տերեւներու իյնալը ներկայացնել դափի վրայ մատները սահեցնելով. փորձել նաեւ շխկոցը ոյտիկ դէպքի վար բռնած. յետոյ թելադրել երեխաներուն որ տերեւներու նման վար սահին/իյնան.

2. Կշոյթ եւ շարժում

Երկու ցուցաբարտ: — մէկուն վրայ քայլով՝ իսկ միւսին վրայ վազող երեխայ. Ուսուցչուհին կը նուազէ հետեւեալ կշոյթը.

դափ. —  քայլել

բոժոժ. —  վազել եւ փոխել ի փոխ



միաժամանակ օգնականը ցոյց կու տայ համապատասխան ցուցաբարտը. աւելի ուշ երեխաները կը ստանձնեն ուսուցչի գործը, մինչ ուսուցիչը կը մասնակցի եւ կը դիտէ.

3. Կշոյթ եւ մկանային ճկունութիւն

Ցուցամատն ու միջնեմատը մկրատ ձեւացնելով օգին մէջ տերեւ, խնձոր կամ տանձ կտրել երգի կշոյթով. ապա նոյնը բնիկ մկրատով եւ թուղթէ տերեւ, խնձոր եւ տանձ կտրել.

4. Կշոյթի աշխատանք (echo clapping)

Տես՝ երգ 2, թիւ 1

աւելցնել՝ ա.  բ.  գ. ա-ր եւ բ-ր միացնել.

Քաջալերել երեխաները որ շարունակեն հրգի մնացեալ երկու սողերը ծափով, ապա գործիքներով.

5. Ձայնի ճանաչում եւ զանազանում բարձր/ցած

ա. զձել փակցնել ծառի վրայ խնձոր մը եւ վար ինկած խնձոր մը.

բ. ունենալ մէկ պարապ շիշ եւ մէկ ջուրով լեցուն շիշ. եռանկիւնի փայտիկով դարձնել երկուքին փոխն ի փոխ եւ զգալ/լսել ձայներու տարբերութիւնը.

ԼՈՒՍԻԿ, ՊՈՒՊՐԻԿՍ

Խօսք եւ երձշտ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Նպատակ: երեխան մեծի դերին մէջ. Բաջայերիլ երեխաները նոր նիւթերով տունն եւ համապատասխան խաղեր շինել (improvisation).


Բառեր եւ խօսակցութեան նիւթ:

Բրբջան, Բող. պուպրիկ խաղցնել, Բնանայ/արթննայ, Բալել, դաշտ երբալ.

Գործիքի անկիւն: եռանկիւն, դափ, ծնծղայ

ԱՇՆԱՏԱՆՔՆԵՐ ԵՒ ՆԱՂԵՐ


1. Ծարժում եւ արտայայտութիւն

ա. Պուպրիկը *ձեռքի վրայ օրօրել*  Հորիզոնական գրկած.
բ. Մէջքէն բռնելով շարժուցնել, պարելու ձեւ տալով.
գ. Թաթիկներէն բռնել եւ քալեցնել, նստիլ, ելլիլ, իյնալ.

2. Կշոռք եւ շեշտ

Յուցադրութիւն. — Երկար ու բարակ շիշ մը, մէջը լեցուն թանձր հեղուկ (սյւսը) եւ խցան մը անոյր վրայ ծփացող. շիշը գլուխն ի վար դարձնել եւ սպասել որ խցանը իջնէ դանդաղ:

Երեխաները այդ խցանը կ'ըլլան եւ կ'իջնեն պետիւն եւ կ'իլլին մինչեւ ատաստող, ապա կ'երգեն երգը եւ նոյն շարժումները կ'ընեն մինչ ասուցչուհին կը նուազէ եռանկիւնը:


↓ | ու – սիկ, | ու – սիկ | սի – բուն քան, ↓ | ձայ – նիդ մա – տաղ | քր – էր – քան.

Աւելի ուշ քաջալերել երեխաները որ ստեղծեն իրենց շարժումները երգի կշոռքի նման.

3. Կշոռք եւ բառ

Օրուան նիւթին համեմատ նախադասութիւններ կազմել: Տես նաեւ երգ 1, թիւ 1.

4. Ձայներու զանազանում եւ շարժում

Ասուցչուհին փոխն ի փոխ կը նուազէ եռանկիւնն ու դափը. եռանկիւնի ձայնին կը քալեն, դափի հարուածին կը սաւին եւ շարունակաբար.

5. Լսողութեան սրում

Ասուցչուհին ձայն (note) մը կ'երգէ եւ երեխան կը հետեւի կ'արձագանգէ. այս խաղը կը սկսի նախ մէկ ձայնով, ապա երկու եւ երեք, առանց բառի, մինչեւ որ ամբողջ նախադասութիւնը կազմուի: Կարելի է ամբողջ նախադասութիւնը կազմել մէկէ աւելի երեխաներով. առաջին երեխան մէկ ձայն կ'երգէ, երկրորդը կը կրկնէ ու կ'աւելցնէ երկրորդ ձայնը եւ այսպէս շարունակաբար, մինչեւ որ նախադասութիւնը կազմուի:

յաւելեալ տուն:

չոփիկ, չոփիկ, չոփ-չոփիկ,
տաբուկ ջուրով տամ քաղնիք,
սանտրիւ մագերղ, հագուեցնեմ,
նոր վերմակով ալ ծածկեմ:
չոփ, չոփ, չոփ-չոփ, չոփ,
պար, պար, պար-պար, պար:

ՇՈՒԿԵԿԱՌ-ՔԸ

Խոսք եւ երժշտ. ՅԱՍՄԻԿ ԻՆՃԷՃԻԿԵԱՆ

Նպատակ: Շարժման դանդաղեմ ու արագը զգալ-

Բառեր եւ խօսակցութեան ցիր:

ծուխ/շոգի, սաստել, հեւալ/Փշշալ. շոգեկառ/ճամբորդական
միջոցներ.

Գործիքի անկիւն: փայտիկ, շխկոց, ծնծղայ.

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՒ ԽԱՂԵՐ


1. Զայնի ճանաչում եւ զանազանում


Երիզակի վրայ նուագել փոխադրական այլեւայլ միջոցներու ձայները, նաեւ
խառնել մի քանի ուրիշ ձայներ (մի, էշ) - նայած գասարանի հետաքրքրութեան՝
խօսիլ նախնական փոխադրամիջոցներու մասին.

2. Կշոռք եւ շարժում

Նուագել հետեւեալ կշոռքները.

ծնծղայով՝ 

փայտիկով՝ 

շխկոցով՝ 

սկսիլ զանդադով եւ հետզհետէ արագացնել եւ ետ վերադառնալ առաջին
արագութեան. երեխաները շոգեկառ կ'ըլլան եւ կը հետեւին նուագի կշոռ-
թային փոփոխութեան.

8. Շարժում եւ արտայայտութիւն. Տես՝ երգ 1, թիւ 4.

4. Կշոռքի աշխատանք (echo clapping)

Նախկին աշխատանքները կրկնել եւ նորերը աւելցնել. գործածել մարմնի
անդամներու ձայներ եւ գործիքներ.

5. Կշոռք եւ բառ

Օրուան նիւթին համապատասխան նախադասութիւններ կազմել եւ նախ
կշոռքով ապա եզանակներով բսել որ կրկնեն.

օրինակ --



շո - գե - կառ - քը ո՞ւր կ'եր - բայ

Տես նաեւ երգ 1, թիւ 1.

Ուշադրութիւն:

Այս երգին մէջ tonality-ն կը փոխուի արագութեան առընթեր. խօսքի մասերը
կայուն են, միւս մասերուն ճշգրիտ երգեցողութիւնը անհրաժեշտ չէ.

ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ

Խօսք՝ ՅԱՍՄԻԿ ԻՆՃԷՃԻԿԵԱՆ

Երժշտ.՝ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ

Նպատակ: Օրff-ի հարուածային գործիքներու տիրապետում.

փայտ	Մետաղ
փայտիկ	բոժոժ
թմբուկ	զանգակ
շխկոց	եռանկիւն
դափ	ծնծղայ

Բառեր եւ խօսակցութեան նիւթ:

տրտում/տխուր – յօնքերը կիտել **X** ուրախ դէմք.

գործիքներու անունները, առարկաներու ձայները. աղմուկ/նուագ.

Գործիքի անկիւն: Երկու խումբի բաժնուած քոլոր Օրff-ի գործիքները.

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՒ ԽԱՂԵՐ

1. Ձայնի ճանաչում եւ զանազանում

Երիզակի վրայ առանձին գործիքներու ձայները ճանչնալ, ապա երգը լսել եւ ձայները զանազանել ու նուագել.

2. Ձայնի վերարտադրում «պահուած ձայն»

Իրենց ծանօթ գործիքի կամ առարկայի ձայները բնորել եւ տալ երեխաներէն մէկուն, այս վերջինը կը պահուրտի դասարանին մէկ անկիւնը եւ յաջորդաբար երկու ձայներ կը հանէ. նստող երեխաները կը զանազանեն ձայները եւ մէջտեղ գտնուող սուսփէն կը գատեն նոյն ձայնը հանող գործիքը կամ առարկան ու կը նուագեն. աստիճանաբար խաղը կը դժուարանայ, ձայներու թիւի յաւելումով.

3. Լսողութեան սրում

Տես՝ Երգ 1, թիւ 3

Գործիքները փոխել — թմբուկ կամ դափ / զօրաւոր → շրջանակը կը սեմուի, եռանկիւն կամ բոժոժ / մեղմ → շրջանակը կը լայննայ.

4. Ծարժում եւ արտայայտութիւն

Տես՝ Երգ 1, թիւ 4.

զանգազ մաս՝ «Այդ ո՞ւր ես դուն պահուրտեր»,

«Ի՞նչ ես դեռ յօնքերդ կիտեր»,

մնացեայր արագ.

5. Կշռութի վերարտադրում եւ յիշողութիւն «նուէր տալ»

Կշռութեան դարձուածք մը տալ երեխաներէն մէկուն որպէսզի «նուէր» տանի իր բնկերներէն մէկուն. այս վերջինը ստացած «նուէր»ը ցոյց կու տայ բոլորին. ուսուցչու հին կը ստուգէ «նուէր»ի ճշգրտութիւնը, կը շտկէ եթէ սխալ է եւ խաղը կը շարունակուի.

ՊՈՒՐՊԱՏԻԿԸ ԾԱՂԿՈՑ ԿՈՒ ԳԱՅ

Խօսք եւ երժշտ.՝ ՅԱՄՐԻԿ ԻՆՃԷՃԻԿԵԱՆ

Նպատակ: Պուրպատիկի խողովակով մարմնի մասերու եւ հագուածքի ծանօթանալ.

Բառեր եւ խօսակցութեան ցիրք:

խոշոր-մեծ/պզտիկ, երկար/կարճ, գարդարուիլ եւ հագուիլ, հաստ/քարակ, յարդէ պարկ, շալէ շապիկ.

Գործիքի անկիւն: դափ կամ ձնծղայ, թմբուկ կամ բոժոժ.

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՒ ԽԱՂԵՐ

1. Երածշտութիւն եւ արտայայտութիւն

Գծել ՊՈՒՐՊԱՏԻԿԻ ԵՐԳԻ ՈՆՆԿՆԳՐՈՒԹԻԱՆ Ժամանակ. գծել նաեւ ինքզինքնին առանց ուղղութեան եւ ապա բազդատիլ.

2. Զգայարանքի շարժունակութիւն (sensory motor)

Տուփի մը մէջ դնել այլազան բաղադրութիւն ունեցող կերպաներ, հիւսուածեղէն (բուրդ եւ յարդանման բուրդ). երեխային աչքերը պոցիլ եւ օգնել որ մէկ հաստ վերցնէ, ապա բացատրէ թէ ի՞նչ կը պատահի. — կարծր, կակուղ, փափուկ, սահուն, եւ այլն.

Համեմատել գայն ՊՈՒՐՊԱՏԻԿԻ Հաղուստին եւ իրենց Հաղուստին հետ: Աւելի ուշ նաեւ եղանակ մը դնել եւ քաջայերեկ երեխան որ ձեռքի ունեցածը համեմատէ յսածին հետ:

3. Ծարժում եւ արտայայտութիւն

Տես՝ երգ 1, թիւ 4. դանդաղ եւ արագ.

4. Զայնի ճանաչում բարձր/ցած.

Սկսիլ երգի երկու մասերէն. — Հարցումի մասի բարակ ձայնէն եւ պատասխանի մասի հաստ ձայնէն — անկէ անցնիլ եւ խօսիլ բարակ՝ բարձր, եւ հաստ՝ ցած ձայն յղացքներու մասին.


Երկու թիւ նուագել. — մէկը հաստ, միւսը բարակ — կիթառի կամ դաշնակի-բասկուլի միջոցն է այս յղացքը տեսնելու, զգալու եւ լսելու. թոյլ տալ որ երեխաներն այդպէն թելիբուն եւ «նուագեն».

5. Զայնի զանազանում եւ շարժում

Տես՝ երգ 4, թիւ 4.

բոժոժին  կը վազեն

թմբուկին  կը քալեն

ձնծղային  կը սառին.

ԿԷՏ – ԳԻԾ – ԿԼՈՐ

Խօսք՝ ՅԱՍՄԻԿ ԻՆՃԷՃԻԿԵԱՆ, Երժշտ.՝ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Նպատակ: Երեխաները կը վարժուին իրենց դժուարութիւնները յաղթահարելի դրական կերպով:

Բառեր եւ խօսակցութեան նիւթ:

Դէմք. — աչք, քիթ, բերան, յօնք, ալտ, մազ.

արեւ / տաճարութիւն / պատուհան, ամպ / ցուրտ / ձմեռ.

Գործիքի անկիւն: եռանկիւն, փայտիկ.

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՒ ԽԱՂԵՐ

1. Քայնի զանազանում եւ շարժում

Տես՝ երգ 4, թիւ 4.

Եռանկիւն 

Փայտիկ 


Նստի քայլի շրջանակ կազմած ապա ուղիղ գիծով, երբ գործիքի ձայնը փոխուի ուղղութիւնը փոխել:

2. Երաժշտութիւն եւ արտայայտութիւն


Երբ երգը լուս սորված են մասներով գծել «արեւիկը» օդին մէջ եւ ապա թուղթին վրայ:

3. Կշռոյթ եւ շեշտ

«Տուր գնդակը» խաղը կրկնել, տես՝ երգ 1, թիւ 2. ապա հետեւեալ կշռոյթով եւ երգով նոյն խաղը բնել:




ա - րե - լիկ, ա - րե - լիկ: դուրս ե - յիր |




4. Յիշողութեան սրում

Ուսուցիչը երգի մէկ մասը կ'երգէ եւ կարճ մաս մը բաց կը ձգէ. ապա կը թելադրէ երեխաներուն որ բաց մնացած մասը ծափով կամ գործիքներով ամբողջացնեն: Երբ խաղը լուս բմբռնած են կարելի է մէկ նախադասութիւն երգել եւ միւսը ամբողջացնել (շարունակել) կշռոյթը ծափելով եւ այսպէս շարունակարար:

5. Կշռոյթի աշխատանք (echo clapping).

Եռանկիւնով  ա.

Ծափով ապա փայտիկներով  բ.


աւելի ուշ երեխաները կը նուազեն առաջին կշռոյթը ամբողջ երգի տեւողութեան, իսկ ուսուցիչը կը նուազէ երգին կշռոյթը փայտիկով եւ միասնարար կ'երգեն:

«ԱՐԵՒԻԿ» ՊԱՐ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Ա. Պատմությունը պատմել է սուրբ երգել. խօսքերուն համապատասխան ձևեր բնել.

բ. Երգել եւ ծափել հետեւեալ կշիռով.



եւայլն.

գ. տես՝ բ. երգ ու փայտիկ — ուսուցչուհին. ծափ — երեխաները.

դ. տես՝ բ. երգ եւ փայտիկ — ուսուցչուհին. օրօրուի եւ ծափել — երեխաները.


ե. երբ երգը լաւ սորված են ուղիղ պիժ կազմել.

տես՝ բ. քայել, իւրաքանչիւր տողին դառնալ եւ դարձեալ քայել.



սողադարձին փոխել պորձիր

զ. քայել եւ կենալ հետեւեալ կշիռով.



աջ ոտքը առաջ նետել ապա՝ ձախը բերել աջին քով միաժամանակ ձեռքերը դնել մէջքին.

է. կրկնել գ-ն. հոս՝ երրորդ չափին (պարկին) աջ ոտքը ետեւ տանիլ եւ չորրորդ չափին ձախը տանիլ աջին քով, կենալ եւ օրօրուիլ.

բ. նոյնը փորձել ետեւ ետեւի շարուած. հոս աջ ոտքը վկպի դուրս դնել երկու անգամ, յետոյ ձախը մէկ անգամ եւ չորրորդ չափին՝ ստերը քով քովի բերել մարմնի վերի մասը ճօճել միաժամանակ.

ստք. —

աջ ետ աջ ետ ձախ ետ կենալ



ա-րե-ւիկ, ա-րե-ւիկ դուրս ե-լիր, պա-տու-եա-նէս ներս մը-տիր.

թ. պարը կազմել ըստ ուսուցչի պարագրութեան.

ԱՄԵՆԷՆ ՊԻՏԱՆԻՆ

Խօսք՝ ՅԱՍՄԻԿ ԻՆՃԷՃԻԿԵԱՆ

Երժշտ. ԱԼ. ՕՀԱՆԵԱՆ

Նպատակ: Կենդանիներու օրինակով երեխան կը զգայ որ ինք ալ բոլորին պիտի լինի և ու օգտակար:

Բառեր եւ խօսակցութեան ցիւր:

ՊԻՏԱՆԻ, քաղ/պահապան, փափուկ/սիրելի, սուր/քարակ.

Գործիքի անկիւն: Քմբուկ/շնիկ, եռանկիւն/փխսիկ,
րոժոժ/ափոր, փայտիկ/հաւիկ.

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՒ ԽԱՂԵՐ

1. Եարժում եւ արտայայտութիւն

Երկու ձեռքերու բթամատը եւ ճկոյթը գործածելով խաղ-թատրոն կազմել.

բթամատը — շնիկ եւ արլոր, ճկոյթը — կատու եւ հաւիկ.

Կարելի է նաեւ մատներու վրայ գծել կենդանիներու «պատկեր»ը կամ կտորով այդ կենդանիին ձեւը տալ. մատներու համապատասխան շարժումներով երգը երգել. երբ երեխաները բոլոր շարժումներուն ընտելանան, ամբողջ երգը վերածել թատրոնի.

2. Զայներու ճանաչում, զանազանում եւ վերարտադրում

Երիզակի վրայ ունկնդրել զանազան կենդանիներու ձայները, հաստատել եւ կապկել. — այսինքն շունի կամ կատուի ձայնով երգել.

3. Լսողութեան սրում «աչկապուկ»

Մէկ երեխայ մէջտեղը ոտքի է, աչքերը կապուած. միւսները նստած են եւ գործիք ունին. ուսուցչին թելադրանքին վրայ երեխաներէն մէկը կը նուազէ. մէջտեղի երեխան պէտք է գիտնայ թէ՛ գործիքի անունը եւ թէ՛ ձայնի ուղղութիւնը.

4. Կշռոյթ եւ բառ

Օրուան նիւթին յատուկ նախադասութիւններ կազմել, զանոնք ծափել եւ ապա փայտիկներով եւ եռանկիւններով ընկերանալ. տես՝ երգ 1, թիւ 1.

5. Մկանային ճկունութիւն

Մկրատով եւ երգի կշռոյթով կտրել թուղթէ կենդանիներ. այս աշխատանքը շարունակել ուսուցչի տուած նոր կշռութային դարձուածքներով. ապա քաջալերել երեխաները որ իրենք կազմեն կշռութային դարձուածքներ.

ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱ

խօսք՝ ՅԱՍՄԻԿ ԻՆՃԷՃԻԿԵԱՆ

Երջժառ.՝ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ

Նպատակ: Ամանորի-Նոր տարուան ուրախ ժամանց, երգ ու պար.

Բառեր եւ խօսակցութեան նիւթ:

ծերուկ/երիտասարդ, ծին/ձմեռ, ուրախ/տխուր.
զարդարուած ծառ/տօնածառ, ամանոր/ՊՈՒԻՐՊԱՏԻԿ

Գործիքի անկիւն: փայտիկ, ծնծղայ, դափ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՒ ԽԱՂԵՐ

1. Կշռոյթի աշխատանք (echo clapping)

փայտիկով:

2. ԶԱՅՆԻ ՎԵՐԱՐՏԱԳՐՈՒՄ ԵՒ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ «նուէր տալ»

Ուսուցչուհին իր քովի երեխայի ականջին մէկ ձայն (note) կ'երգէ մեղմ, երեխան զայն կը փոխանցէ հետուն նստած ուրիշ երեխայի մը որպէս «նուէր».
այս վերջինը ստացած «նուէր» բարձրաձայն կ'երգէ. եթէ ճիշդ է՝ երկու երեխաներն ալ ունկնդրելու եւ փոխանցելու լաւ կարողութիւն ունին. իսկ եթէ ոչ՝ ուսուցչուհին կը գտնէ սխալ փոխանցողը կամ ստացողը եւ «նուէր» կը շտկէ:

3. Կշռոյթ եւ բառ

Տես՝ երգ 1, թիւ 1.

4. Լսողութեան սրում՝ «աշկապուկ»

Տես՝ երգ 9, թիւ 3. գործիքները փոխել.

5. Զայնի զանազանում եւ շարժում

Դափի ձայնին հետեւելով քաշել, վազել կամ սահիլ եւ ապա կենալ երբ ձայնը կը կենայ. երգի կշռոյթը — տես՝ թիւ 1 — նուագել նախ գանդաղ՝ քաշելու եւ ապա արագ՝ վազելու համար, իսկ սահելու համար ուսուցչուհին փայտիկը կը սահեցնէ դափի վրայ 6-ի զարկերով.

ԱՐԺԵՒՈՐՈՒՄ

Այս տարիքի երեխաներուն համար ուսուցիչը ամէն ինչ է. ծնողք է, խաղընկեր է, օրինակ է, ստեղծող է, օգնող է, նաեւ դիտող է եւ հոգեբան:

Դիտողի եւ հոգեբանի դերին ընդմէջէն է որ ուսուցիչը պիտի արժեւորէ երեխային անման ընթացքը եւ հետեւաբար բարեփոխէ՝ եթէ անհրաժեշտ է:

Ստորեւ կու տանք շարք մը հարցումներ, որոնցմով կարելի է դիտել եւ արժեւորել երեխային անման ընթացքի որոշ ազդակները.

- Բառացի բացատրութիւնները ո՞րչափով կը հասկնայ. անոնց ընդօրինակումը ո՞րչափով գոհացուցիչ է.
- Կապկումի, հայելի ըլլալու եւ արձագանգ ըլլալու աշխատանքներուն ո՞րքանով կը մասնակցի.
- Ֆիզիքական աշխատանքներու մէջ. —
 - շարժումները համաչափ են,
 - խումբին հե՞տ է թէ առանձին,
 - որքա՞ն շուտ կը յոգնի,
 - շարժումները ինքնաբերաբա՞ր կ'ընէ (երգի պահուն), թէ ուսուցչի պահանջով,
 - կարգի կրնա՞յ սպասել (to take turns).
- Երաժշտական աշխատանքներու մէջ. —
 - խմբական երգեցողութեան կը մասնակցի՞ առանց հրաւերի,
 - երբ իրմէ խնդրուի, առանձին կ'երգէ՞,
 - ազատ խաղի պահուն, գործիքի անկիւնէն կը գատէ՞ գործիք մը եւ կը հետաքրքրուի՞ անով,
 - երգի դասէն դուրս, բոլորովին անկախաբար, կը սիրէ՞ երգել,
 - ո՞րչափով կ'ըմբռնէ երաժշտական յղացքները. — դանդաղ/արագ, վեր/վար, ցած/բարձր, մեղմ/զօրաւոր,
 - շեշտը եւ չափը լաւ կը զգա՞յ.

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

«Ուսուցչի ուղեցոյց»ի մէջ տեղ գտած սկզբունքներու, համոզումներու, աշխատանքներու եւ խաղերու ամբողջութիւնը արդիւնք են շուրջ 15 տարուան ընթացքին կատարուած ուսումնասիրութիւններու, փնտռումներու եւ մասամբ՝ փորձառութեան: Անոնցմէ շատերը հաստատուած են բազմաթիւ մասնագէտներու կողմէ: Աշխատանքներու եւ խաղերու մէկ մասը պատրաստուած են մեր կողմէ, ուրիշներ՝ յարմարցուած են մեր երգերուն, իսկ աւելի ուրիշներ՝ ընդհանրացած աշխատանքներու խաղեր են:

Մեր երաժշտական ծրագիրը շարունակելի աշխատանք մըն է. կը յուսանք շուտով հրապարակ դնել երկրորդ ձայնապնակը, որու կողքին մասն իր ուղեցոյցը: Երրորդ ձայնապնակի պատրաստութեան ընթացքին կը յուսանք մէկտեղել երեք ուղեցոյցները մէկ գրքի մէջ. հոն պիտի պարփակուին երգերու խօսքերն ու եղանակները, դաշնամուրի բաժնով, աշխատանքներն ու խաղերը, գծագրութիւններ եւ օգտագործելի աղբիւրներու ցանկ մը:

Ձեր թելադրութիւններն ու առաջարկները, նոյնիսկ քննադատութիւնները շնորհակալութեամբ կ'ընդունինք, վստահ ըլլալով որ անոնք պիտի օգնեն մեր յառաջիկայ աշխատանքներուն: